



«ԱՐՅԱՆ»
ԳԻՏԱՆՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԱՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ
ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԿ



ՄԵԴԻԱ
ԱՍՈՑԻԱՅԻՆ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՆ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

№ 4(7), 2020

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 4(7), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The «Scientific Artsakh» journal is posted on www.elibrary.ru website.

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных

Высшим аттестационным комитетом Республики Армения (BAK RA).

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

**Ընթացիկ համարը նվիրվում է 2020թ. սեպտեմբերի 27-ին
աղբբեջանաթուրքական վարձկան հրոսակների սանձագերծած
պատերազմում Արցախի Սուրբ հողի քաջարի պաշտպաններին:**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Նաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)

Գևորգ ԴԱԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՐԻՎԱԶՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալֆրեդ դե ՉԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)

Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)

Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Միսսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԽՏԵՐՅԱՆՆԻՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մուշեղ ՀՈՎՍԵԹՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 4(7), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 280 էջ:

**«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 4-րդ (7-րդ) համարի տպագրության
աջակցել է «Մեդիա ասոցիացիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:**

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

*The current issue is dedicated to the brave defenders
of the Holy land of Artsakh in the war unleashed by
azerbaijani-turkish mercenaries on September 27, 2020.*

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member,
Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Lena ASRYAN, Doctor of History (Tarragona, Spain)
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (Lviv, Ukraine)
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor (Minsk, Belarus)
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (Geneva, Switzerland)
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 4(7), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 280 pages.

The publication of the 4th (7th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «Media Association» LLC.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

*Текущий номер посвящен отважным защитникам
Святой земли Арцаха в войне, развязанной азербайджано-
турецкими наемниками 27 сентября 2020 года.*

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 4(7), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 280 страниц.

Публикация 4(7) номера 2020 года журнала «Научный Арцах» была осуществлена при содействии ООО «Медиа ассоциация».

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

Լուսինե Սուլեյմանյան. «Էլեկտրոնային ապացույցները» քրեական դատավարությունում.....	73
Lusine Suleymanyan. «Electronic Evidence» in the Criminal Procedure	
Лусине Сулейманян. «Электронные доказательства» в уголовном судопроизводстве	

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ

Հասմիկ Կիրակոսյան. Պարսկախոսությունը Շիրվանի հայ բնակչության շրջանում (ԺԸ. Դար).....	83
Hasmik Kirakosyan. The Persophonie among Armenians of Shirvan (18 th Century)	
Асмик Киракосян. Персофония у армянского населения Ширвана (XVIII в.)	

Վահե Հակոբյան. I'tikāf-ի ծիսակարգն ըստ սուննի կրոնաիրավական մազհաբների.....	93
Vahe Hakobyan. The Ritual of I'tikāf According to Sunni Religious Legal Madhabs	
Вале Акобян. Ритуал «итикаф» в соответствии с религиозно-правовыми мазхабами	

Արաքս Փաշայան, Նազելի Նավասարդյան. Շիայականության գործոնը ադրբեջանաիրանական հարաբերություններում.....	104
Araks Pashayan, Nazeli Navasardyan. Shia Factor in Azerbaijani-Iranian Relations	
Аракс Пашаян, Назели Навасардян. Шиитский фактор в азербайджано-иранских отношениях	

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

Աննա Ավագյան. Երևան քաղաքի ջրամատակարարման գնահատումը լատենտ փոփոխականի մոդելավորման միջոցով.....	114
Anna Avagyan. The Assessment of Yerevan Water Supply by Latent Variable Modeling	
Анна Авакян. Оценка водоснабжения города Еревана с помощью моделирования латентной переменной	

Եվգենյա Հայրիյան, Մարիա Անտոնովա. Բազել III-ի առնչությունները ՀՀ-ում ֆինանսական համակարգի կայունության ապահովման հետ.....	122
Yevgenya Hayriyan, Maria Antonova. Basel III Relations with Ensuring Financial System Stability in Armenia	
Евгения Айриян, Мария Антонова. Отношения Базеля III с обеспечением стабильности финансовой системы в Армении	

Հռիփսիմե Հովսեփյան. Ներքին աուդիտի ներհատուկ հիմնական ռիսկերը.....	133
Hripsime Hovsepyan. Main Inherent Risks of Internal Audit	
Рипсима Овсепян. Основные риски, характерные для внутреннего аудита	

Չավեն Մկրտչյան. Հանքարդյունաբերության զարգացման տնտեսա-էկոլոգիական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում.....	144
Zaven Mkrtychyan. Economic and Environmental Problems of Mining Industry Development in the Republic of Armenia and the Republic of Artsakh	
Завен Мкртчян. Экономико-экологические проблемы развития горнодобывающей промышленности в Республике Армения и Республике Арцах	



**ՊԱՐՍԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐՎԱՆԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆՈՒՄ (ԺԸ. ԴԱՐ)* 209**

ՀՏԴ 908

ՀԱՍՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

*Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական
ինստիտուտ-Մատենադարանի ավագ գիտաշխատող,
Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
hasmik.kirakosian@ysu.am*

*Հոդվածում քննության է առնվել ԺԸ. դարում Շիրվանի հայ բնակչության
շրջանում պարսկերենի տարածվածության խնդիրները և դրա կիրառական
նշանակությունը: Նպատակն է բացահայտել տարածաշրջանում
տեղահանությունների և իսլամի պարտադրման պայմաններում հայերի կողմից
պարսկերենի յուրացման գործընթացը և առաջացած երկլեզվակրության
արդյունքերը: Առաջադրվել են շիրվանահայերի շրջանում պարսկերենի իմացության,
ժամանակի մեջ դրա տարբերակների դրսևորման ու գործառնական նշանակության
խնդիրները: Կիրառվել է հանրալեզվաբանության մեթոդաբանությունը:*

*Հոդվածի հիմնական եզրահանգումներն են. շիրվանահայերը մշակութային
պարսկականացման շրջանակներում բացի հայերենից տիրապետել են պարսկերենի
բանավոր՝ խոսակցական ու գրական տարբերակներին: Բանավոր խոսակցական
տարբերակին տիրապետելը պայմանավորված է եղել հարևան պարսկախոսների
հետ շփման անհրաժեշտությամբ: Գրական պարսկերենի կիրառական
նշանակությունը հայերի շրջանում պահպանվել է մինչև ԺԸ դարի վերջ, որի մասին
վկայող աղբյուրներ են Երևանի Մատենադարանի հայերեն ձեռագրաֆոնդի
հայատառ պարսկերեն Ավետարանի Հ^մ 8492 և Հ^մ 3044 ձեռագրերը:*

*Հիմնաբառեր՝ Շիրվան, հայ բնակչություն, պարսկախոս, երկլեզվություն, միջթնիկ
շփման լեզու, մահմեդականացում հայատառ, ձեռագիր, Ավետարան:*

Լեոն «Մշակ» թերթում հրապարակած «Շամախի» հոդվածում գրում է. «Հայերը
Շիրվանում բնակութիւն են հաստատել շատ հին ժամանակներից: Բացի դրանից, չը
պետք է մոռանալ, որ Շիրվանը հին Աղուանից երկրի մի մասն է, իսկ Աղուանից երկիրը

* Հոդվածը ներկայացվել է 20.07.2020թ., գրախոսվել՝ 10.08.2020թ., տպագրության
ընդունվել՝ 22.12.2020թ.:
²⁰⁹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական
աջակցությամբ՝ 18T-6F376 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

երկար դարերի ընթացքում եղել է հայերի կուլտուրական և քաղաքական խիստ ազդեցութեան տակ»²¹⁰:

Միջնադարում երկրամասի հայաբնակ շեների թիվը հասել է ավելի քան 200-ի, որոնք կորուստներով դիմացել են մինչև ԺԸ դարի առաջին քառորդը²¹¹:

Ընդհանուր տեղեկություններ: Ժ-ԺԶ. դարերում Կուրի ստորին հոսանքից մինչև Կասպից ծովն ընկած երկրամասը, որը սկզբնաղբյուրներում առավելապես հայտնի էր Շիրվան անունով²¹², եղել է մշակութապես պարսկականացված Շիրվանշահերի իշխանության և նրանց պաշտոնական լեզու հանդիսացող պարսկերենի գերակայության տարածքը²¹³: Այդ ժամանակաշրջանում պարսկական մշակույթը և պարսկերենը խաղաղ համակեցության մեջ են եղել բնիկ ժողովուրդների, այդ թվում՝ հայերի լեզվի և մշակույթի հետ: Այդ ընթացքում և այդ տարածքում նոր պարսկերենին զուգահեռ ստեղծվել են նաև դրա բանավոր տեղական տարբերակները: 1538 թվականին Շիրվանում Սեֆյանները հաստատել են իրենց իշխանությունը, որն իրականացրել են թյուրքախոս ղզլբալների միջոցով: Ստեղծվել է սեֆյանահպատակ Շիրվանի բեկլարբեկությունը²¹⁴: Իրանական ներկայությունը Շիրվանում սասանվել է հատկապես Սեֆյանների անկումով, իսկ այդ դարաշրջանում տեղի ունեցող լեզվական ու կրոնական գործընթացները, տեղահանությունները կարևոր նշանակություն են ունեցել երկրամասի ժողովուրդների, այդ թվում՝ հայերի հետագա ճակատագրի համար: Սույն հոդվածում քննության կառնենք ԺԸ. դարում Շիրվանի հայ բնակչության շրջանում պարսկերենի տարածվածության խնդիրը, դրա կիրառական նշանակությունը և հետևանքները:

ԺԸ. դարասկզբին Սեֆյանների իշխանությունն անկում է ապրում և Շիրվանում ու Շաքիում այդ դարի 20-ական թվականներին հաստատվում են դադեստանյան լեռնականները՝ Յաջի Դաուդ Բեկի և Սուրխայի խանի գլխավորությամբ: Ընդ որում, տարածքում սկսվում է սունի-շիայական հակամարտություն:

Դաուդ բեկը զբաղված էր կողոպուտով ու հարձակումներով, իսկ 1719 թվականից արգելել էր շիրվանյան ճանապարհներից օգտվել՝ առևտուր անելու համար²¹⁵, պայթարում էր ռուսական ազդեցության տարածման և օսմանցիների առաջխաղացման դեմ: 1712-1722 թվականների ընթացքում լեզգիների ասպատակությունների արդյունքում Շամախի, Շաքի, Արցախ, Գանձակ զավառներում տեղի է ունենում տեղաբնիկ հայերի գերեվարություն: Ինչպես նշում է Մակար Բարխուտարեանցը, այսչափ սպանություններն ու գերեվարությունները «դատարկում են խոճալի Աղուանից երկիրն»²¹⁶:

Լեզգիներին Շամախիից դուրս քշելու գործում կարևոր դերակատարություն ունեցավ պարսից Նադիր շահը: Նա Մուղանի վրայով շարժվում է դեպի Շամախի՝ Նպատակադրվելով ավերել այն: Շամախիի մոտ Նադիրի բանակի երևալը ստիպում է, որ

²¹⁰ Տե՛ս, **Լեո**, «Շամախի», *Մշակ*, Թիֆլիս, 1902, փետրվարի 7, N 28

²¹¹ Տե՛ս **Կարապետյան Ս.**, «Շամախու գավառի գյուղերի պատմությունից», *ԼՅԳ* 2, Երևան, 1989, էջ 57:

²¹² Տե՛ս **Минорский В.**, История Ширвана и Дербенда X-XI вв., Москва, 1963, С. 85, 106-119.

²¹³ Շիրվանշահերի մասին տե՛ս **Bosworth** C. E., *Servānšāhs*, *EI*, <http://www.iranicaonline.org/articles/servansahs>, վերջին այց՝ 11.05.2020:

²¹⁴ 1846 թվականի վերջերից երկրամասը կոչվել է *Շամախու*, իսկ 1859 թվականի վերջերի՝ *Բաբվի* նահանգ անուններով, տե՛ս **Ստեփանյան Գ.**, «Գանձակ-Ելիզատավետալոյի նահանի Նուփի և Արեշ գավառների ու Բաբվի նահանգի հայ բնակչության պատմաժողովրդագրական համառոտ ակնարկ (XIX դարի երկրորդ կես-XX սկիզբ)», *Արևելագիտության հաջորդ* հ^տ 9, 2015, էջ 219:

²¹⁵ Տե՛ս **Б у т к о в П. Г.**, *Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 гг.*, Ч. 1, СПб., 1869, С. 3-4.

²¹⁶ Տե՛ս **Մակար Եպս. Բարխուտարեանց**, *Աղուանից երկիր և դրացիք: Արցախ: Խմբ. տ. Մետրոպ քին. Արամեան, Երեւան, Գանձասար, 1999, էջ 56:*

քաղաքի բնակչության կեսը կազմող թաթարները (ռուսական աղքյուրներում այսպես էին կոչվում էթնիկ թյուրքական ցեղերը) փախչեն լեզգիների բնակեցրած լեռները: Հայերն ու եվրոպացիները մտում են քաղաքում և պատրաստ էին ընդունել իրանցիներին: Նադիրը մտնում է Շամախի: Նա ձերբակալում ու կոտորում է քաղաքում գտնվող փոքրաքանակ թուրքերին: Շահն ուզում էր լեզգիներին հետապնդել մինչև իրենց վերջին հանգրվանը, սակայն լեռնանցքներով ու ոլորապտույտ ճանապարհներով լի լեռնաշղթայում նրանց հետապնդելն անհնարին էր, ճանապարհները հայտնի էին միայն տեղի բնակիչներին: Նա վրեժի ծարավը բավարարում է մի շարք գյուղեր այրելով, դաշտավայրի բնակավայրերն ասպատակելով: Այդ արշավանքից հետո նա իր բանակով շարժվեց դեպի Գանձակ, որը լքեց երկու ամիս պաշարելուց հետո²¹⁷: Սակայն լեզգիներին ամբողջությամբ դուրս քշել հնարավոր չեղավ, նույն կարգի վայրագություններ նրանք արեցին Գանձակում՝ 1753 թվականին: Շամախին կործանելուց հետո Նադիր շահը 700000 գերի՝ հայեր, վրացիներ, տեղափոխել է Իրան²¹⁸: Լեզգիական ճնշումների մասին է խոսում նաև Յովսեփ Արքեպիսկոպոս Արղուբեանի նամակը՝ ուղղված ռուսական հրամանատարությանը, որով նա խնդրում է նրանց ճնշումներից պաշտպանել Մուշկուրի նահանգի Խաչմաս, Ղարաջալու, Մեծ և Փոքր Պարախում, Զիվար, Ղարաղուրթլու և Ազատոլլի, ինչպես նաև Դերբենդ նահանգի Մուլա-խալիլ և Նուզգի գյուղերը²¹⁹:

Սեֆյաններից հետո արևելյան Այսրկովկասը դարձավ ռուսների, օսմանցիների, լեզգիների և իրանցիների՝ փոփոխվող ուժային ազդեցության գոտի, սակայն անջնջելի էին երկրամասում պարսկական մշակույթի ու պարսկերենի, պարսկական ներկայության հետքերը՝ «Պարսիկներն թողած են պարսիկ ժողովուրդ, որք բնակում են թե՛ բոլոր քաղաքներում եւ թե՛ դաշտային գավառներում»²²⁰:

1723 թվականին, երբ ռուսները հաստատվեցին Բաքվում, քաղաքում ապրում էին հիմնականում ղզլբաշներ կամ պարսկական զինվորներ²²¹, որոնք աշխատավարձ էին ստանում: Բաքվի մերձակա գյուղերը դատարկ էին Շամախիում տեղի ունեցող վայրագությունների պատճառով²²²: Մինչդեռ ժՁ. դարի վկայությունները Բաքվի հայության մասին ցույց են տալիս, որ Բաքուն երբեք չի դատարկվել հայերից (մինչև Ի. դարի վերջի իրադարձությունները) և ունեցել է սովոր հայ բնիկ բնակչություն: Այսպես, Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանցը նշում է, որ ժՁ. դարի վերջին Բաքվում առաջնորդական պաշտոնն իրականացնելով մի քանի եկեղեցական ու դպրոցական կարևոր գործեր է արել՝ մասնավորապես ծխաբաժանության գործն իրականացնելով, երրորդ եկեղեցու շինարարության գործն իրականացնելով, և ամենամեծ խնդիրը, որ կարևոր էր Էջմիածնի մայր աթոռի համար, արդյունաբեր կալված է հայթայթել Բաքվի

²¹⁷ Տե՛ս **Չուլայան Մ.**, *Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների*, Երևան-ՀԳԱ հրատ., 1990, էջ 215-216:

²¹⁸ Տե՛ս **Սակար Եպս. Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 56:

²¹⁹ Տե՛ս **Յակոբեան Ա.**, «Հայ-թաթարի տարաբաշխուսածութեան ու տեղահանութիւնների պատմութիւնից (ԺԸ. դարի սկիզբ – ժՁ. դարի վերջ)», *Հայկապետն Հայագիտական Հանդես*, հ. ԻԱ., Պեյրուզ 2001, էջ 128:

²²⁰ Տե՛ս **Սակար Եպս. Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 149:

²²¹ Վերջիններս թյուրքախոս էին և թյուրքախոսության տարածումը Կապադակի մի շարք հայկական գյուղերում (*Միրզաբեկլու, Չորլու, Սուլթան-Նուխի* և այլն) բացատրվում է նաև այդտեղ ղզլբաշների հաստատմամբ: Ընդ որում, ինչպես նշում է Սամվել Կարապետյանը, ինչը վկայում են նաև այդ գյուղերի հայկական գերեզմանոցների տապանաքարերի վիմագրությունները, թյուրքախոսության պայմաններում ևս այս գյուղերում գրված տապանաքարերը հայերեն են եղել, տե՛ս **Կարապետյան Ս.**, «Պատմական Հայաստանի Կապադակ գավառի թրքախոս հայկական գյուղերը», *Լրաբեր հասարակական գիտությունների*, 3^դ 4, 1988, էջ 50:

²²² Տե՛ս **Б у т к о в П. Г.**, Укз. соч., С. 46.

մեջ²²³: Մեսրոպ Արք-եպիսկոպոս Սմբատեանցի այս հիշատակությունը խոսում է այն մասին, որ Բաբվի հայ բնակչությունը երբեք չի թողել իր բնակավայրը և Նույնիսկ նշված ժամակահատվածում Նոր եկեղեցի կառուցելու պահանջ է ունեցել:

Շիրվանի կենտրոն Շամախիի Սաղիան գյուղի ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը կառուցվել էր 1660 թվականին, իսկ բնակչության զգալի մասը գաղթել էր Սպահանից²²⁴: Սաղիանի վանքի նորոգման համար Սիմեոն կաթողիկոսը 1768 թվականին հղեց կոնդակ, որտեղ կաթողիկոսը նշում է բոլոր հայաբնակ Աղուանից տները. «յևստուածախնամ քաղաքդ Գեանճայ, և ի համայն վիճակս դորին. ի բոլոր երկիրդ Խամսայու, և Շուշու, և յամենայն Նահանգս և ի Գիւղօրայս դորին... ի Շամախի և յամենայն գաւառս դորին, ի Շաքի, ի Նուխի, և յայլ շրջակա գաւառս դոցին՝ ի բոլոր երկիր Շիրուանու: Այլ և ի Բագու, և ի Դարբանդ և յամենայն շրջակա գաւառս և ի գիւղօրայս դեցին՝ ի Տիրապահ և յևստուածախնամ քաղաքդ Յաշտարխան, և ի Ղլլար, և ի բոլոր երկիրդ Գիլանու...»²²⁵: Այս տարածքների հայ բնակչության հիշատակումը Սիմեոն կաթողիկոսի կողմից կարևոր կռիվն է, որ ԺԸ. դարի երկրորդ կեսին հայ բնակչությունը, ապրելով այս տարածքներում, հայապահպանության խնդիր ուներ. հրատապ էին եկեղեցաշինությունը, դպրանոցների բացման և գործարկման խնդիրները: Իսկ 1796 թվականին սպասվող ռուսական արշավանքի կապակցությամբ դեպի Այսրկովկաս Յովսեփ Արքեպիսկոպոս Արղուբանը Մուշկուրի և Դերբենդի ինը հայկական գյուղերի անունից դիմում է ռուսական հրամանատարությանը և օգնություն ակնկալում դեռևս 1792 թվականից Ռուսաստանին հավատարմություն հայտնած այդ գյուղերի համար²²⁶: Այս իրադարձությունները, իհարկե, ճակատագրական էին հյուսիս-արևելյան Այսրկովկասի բնակչության համար, որոնք թողնում էին իրենց բնակավայրերը՝ Յյուսիսային Կովկասում հաստատվելու համար, սակայն Նաև կարևոր կռիվներ էին հայաբնակ գյուղերի գոյության մասին:

ԺԸ. դարում Արևելյան Այսրկովկասի հայ բնակչության համար տեղահանությունների հետ մեկտեղ տեղի էր ունենում (Նաև՝ տեղի էր ունեցել) լեզվական ինքնության փոփոխման գործընթաց՝ երկլեզվության և երբեմն Նաև եռալեզվության երևույթներ, որոնք ուղեկցվում էին Նաև մահմեդկանացման շարունակական գործընթացով:

1. Զրիստոնեա-մուսուլմանական հարաբերությունները և մահմեդականացման քարոզչության գործընթացը

ԺԸ. դարի սկզբին հայերի նկատմամբ իրանական իշխանությունների գործադրած հալածանքների մասին հիշատակել են եվրոպացի ճանապարհորդ-հեղինակներն ու կաթոլիկ քարոզիչները: «Անհավատները,— գրում է ճիզվիտ մի միսիոներ,— հայերի նկատմամբ գործադրում են դաժան իշխանություն: Նրանց ծանրաբեռնում են զանազան տուրքերով ու հարկերով և դրանք հավաքում բռնությամբ»: 1698 թվականին Ղազվին ճանապարհորդած ֆրանսիացի հիսուսյան ժան-Բատիստ դը լա Մազը (1624-1709 թթ.), անդրադառնալով Թավրիզի հայության իրավական վիճակին, նշում է, որ «...հայ քրիստոնյաները խիստ ճնշումների են ենթարկվում, հայերին մյուսներից լավ տարբերելու համար հրամայված է, որ իրենց

²²³ Տե՛ս Մեսրոպ Արք-եպիսկոպոս Սմբատեանց, *Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի և միւս վանօրէից եւ ուղտատեղեայ, եւս եւ քաղաքացւս եւ գիւղերօրէից որբ'ի Շամախոյ թեմի (Սկսեալ 'ի 1887 ամե գ-1895 ամս)*, Տիփիսի, Տպարան Մովսէս Վարդանեանցի, 1896, էջ 78-79:

²²⁴ Տե՛ս Նույն տեղում, էջ 50-51:

²²⁵ Տե՛ս Մեսրոպ Արք-եպիսկոպոս Սմբատեանց, նշված աշխ., էջ 80-81:

²²⁶ Տե՛ս Յակոբեան Ա., նշվ. աշխ., էջ 127-128:

մահուդե գլխարկներին մանիշակագույն կտոր կարեն, և նրանց արգելում են տներից դուրս գալ անձրևի ժամանակ կամ երբ ցեխ է լինում: Ե՛վ Սպահանում, և՛ Իրանի մյուս կողմերում ըստ ամենայնի ջանք են թափում, որպեսզի մարդիկ հրաժարվեն քրիստոնեական կրոնից ... Անգամ Շամախում հայերին կործանելու զարմանալի միջոցների են դիմում: Անհիմն տուգանքներ են բարդում նրանց վրա, իսկ գյուղացիներն այն աստիճան են ճնշված, որ գրեթե բոլորն էլ մտածում են իրենց երկրից հեռանալու մասին և եթե ունենային ապահով ապաստան, այստեղ չէր մնա ոչ ոք»²²⁷: Նա նաև վկայում է, որ հայ վեց կոշկակար հավատափոխ եղավ, քանի որ շահր արգելել էր մուսուլմաններին գործարքի մեջ մտնել քրիստոնյա արհեստավորների հետ²²⁸:

1722 թվականիո Դաուդ-բեկը, երբ ռուսների հովանավորությամբ դարձավ Շամախի-Շիրվանի խանը, սկսեց հատկապես քրիստոնյաների նկատմամբ հալածանքները: Օրինակ՝ քրիստոնյաներին հրամայել էր կրել դեղին կրծքանշաններ, որպեսզի մուսուլմանները նրանց «սալամ ալ-այթոմ (ողջույն)» չասեին²²⁹:

Նույն ժամանակըջանում Օսմանյան գորբերը զգալիորեն առաջանում են Այսրկովկասում և բուն Աղուանքի տարածքում նպաստում էթնո-կրոնական իրավիճակի խախտմանը²³⁰: Ղազար Յովսեփյան քահանան, հղելով Մակար Բարխուտարեանցին, հիշատակում է բնակավայրերը, որոնք ԺԸ. դարի կեսին մահմեդականացվել էին, այն է՝ Խաչ-մաս, Վանտամ, Փաղար, Ղուղաշեն, Բումավան, Էրմանիտ և այլն²³¹: Իսկ ԺԸ. դարում սկսված մահմեդականացման գործընթացի արդյունքը Մակար Բարխուտարեանցը արձանագրել է այս թվաքանակով. «Շաքուայ գաւառների տաճկացեալ հայոց ծխաթիվը՝ 15480 ծուխ»²³²:

Մահմեդականացման գործընթացի ժամանակ կիրառվող մեթոդներից հիշատակման է արժանի քարոզչությունը, որի ընթացքում մուսուլման հոգևորականները քրիստոնյա համայնքին համոզում էին իսլամի ճշմարտության մեջ և հող նախապարաստում հավատափոխության համար: Այս երևույթի աղբյուրագիտական հենքը, որը նաև կարևոր է հայերի մեջ պարսկախոսության տարածվածությունը քննելիս, Երևանի Մատենադարանի հայերեն ձեռագրաֆոնդում պահվող հայատառ պարսկերեն Ավետարանի երկու ձեռագրերի հիշատակարանների հաղորդումներն են: Գաղափար ձեռագիրը, Յ^Մ 8492, գրվել է 1717-1720 թվականներին Շամախիում²³³ և ընդօրինակվել է 1780 թվականին Գանձակում, Յ^Մ 3044²³⁴: Հիշատակարանները հաղորդում են, որ

²²⁷ Տե՛ս **Չուկայան, Մ.**, նշվ. աշխ., էջ 185-186:

²²⁸ Տե՛ս **Jean-Baptiste de la Maze**, “Journal du voyage du Père de la Maze, de Chmakié à Ispahan, par la province du Guilan”: in *Lettres édifiantes et curieuses, écrites des missions étrangères*, ed. by P. Fleuriau, Toulouse: Noel-Etienne Sens, 1811, 4: 74:

²²⁹ Տե՛ս **Б у т к о в П. Г.**, Укз. соч., С. 10-11.

²³⁰ Տե՛ս **Խառատյան Յ.**, «Քրիստոնեությունը Բուն Աղուանքի տարածքում զարգացած միջնադարում», Հայաստանը եւ Երիտառնյա Կովկասը, Հանրապետական գիտաժողով՝ նվիրված Կովկասյան դրաններում եւ Կրաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին, Երեւան, 15-16 դեկտեմբերի, 2015 թ., *Չեկուցումներ և վեկուցումների դրոյթներ*, Խմբ. Ա. Հակոբյան, Ա. Բոզոյան, Ռ. Սաֆրաստյան, Երևան. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 117:

²³¹ Տե՛ս **Յովսեփեան Ղ.**, *Ակնարկներ ուստիացի եւ մահմեդական հայերի մասին*, Թիֆլիս, 1904, էջ 64-65: Ղազար Յովսեփյանը իր այս գրքում վկայակոչում է նաև մահմեդականացման դեպքերն ու ձևերը, տե՛ս նույնը, էջ 62-63:

²³² Տե՛ս **Մակար Եպս. Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 147-148:

²³³ *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, Խ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Չեյթունյան, Թ. Անթաթյան, ցանկերը և համեմատական տախտակները՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1970 սյ. 756:

²³⁴ *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, Խ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Չեյթունյան, Թ. Անթաթյան, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965 սյ. 927, նաև՝ *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց*

Ավետարանը պարսկերեն թարգմանելու հիմնական նպատակը քրիստոնյա համայնքին օգնելն է, որ մուսուլման հոգևորականների հետ զրույցներում կարողանան պարսկերենով վիճաբանել կրոնական հարցերի շուրջ և հավատափոխ չլինեն²³⁵: Սեֆյան շրջանից սկիզբ առած մահմեդականացման քարոզչությունը, որն իրականացվում էր պարսկերենով, շարունակվում էր նաև ԺԸ. դարում և սույն ձեռագրերի հաղորդումները եական են շիրվանահայերի շրջանում մահմեդականացման գործընթացը արձանագրելու համար:

2. Պարսկերենի տարածվածությունը

Մինչև Ժ2. դարը պարսկերենի և պարսկականցված մշակույթի գերակայության գոտի լինելուց հետո, ինչպես նշվեց, Շիրվանն անցավ Սեֆյանների իշխանության տակ, որոնք ևս, չնայած իրենց իշխանությունը տարածում էին թյուրքախոս ղզլբաշների միջոցով, սակայն պարսկական մշակույթի կրողներն ու հովանավորներն էին: Տարածքում պարսկերենի տարածվածությունը պայմանավորված էր նաև մեծաքանակ պարսիկ բնակչությամբ: Մասնավորապես, Մեսրոպ Արքեպ. Սմբատեանցը նշում է, որ ԺԹ. դարի երկրորդ կեսին Շամախի քաղաքի վերին տափարակ մասում հայեր և ռուսներ, իսկ ներքին թաղում պարսիկներ են ապրում: Ընդ որում, հայերն ու պարսիկները մեծամասնություն են կազմել՝ պարսիկները՝ 3000 տուն, իսկ հայերը՝ 500 տուն²³⁶: 1891 թվականին 480 տուն՝ 2345 արական և 1890 իգական անձերից բաղկացած: Եվ հայերը, շրջապատված լինելով պարսիկներով, «կամայ մոռացել էին հայության հոգին, և մի պատճառ պետք էր, որ թողային հայ կրօնը և եկեղեցին...»²³⁷: Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանցը Շամախեցի Լալայեանց տոհմի կենսագրությունը ներկայացնելիս ակնարկում է, որ 1730-ական թվականներին Շիրվանում պարսից խանության ժամանակ հայերեն լավ իմացող ուսեալ քահանայի պահանջ է եղել²³⁸, ինչից նույնպես ենթադրելի է, որ պարսկախոսությունը հայերի շրջանում տարածված է եղել, որի օգտին են խոսում նաև վերոբերյալ հայատառ պարսկերեն ձեռագիր Ավետարանների հիշատակարանների տեղեկությունները և ձեռագրերի գոյությունն ինքսին: Պարսկերենի տարածվածությունը և հայերի մեջ պարսկախոսության աճին նպաստում էր նույն բնակավայրում պարսկախոսների հետ շփվելու պահանջը, որոնք ըստ ամենայնի արդեն ձևավորել էին պարսկերենի իրենց տարբերակը (կովկասյան պարսկերենը²³⁹): Պատահական չէր, որ պարսկերենին լավագույնս տիրապետում էր նաև Հակոբ Շամախեցի կաթողիկոսը (կաթ. 1759-1763 թվականներին)²⁴⁰:

Աղբյուրագիտական տեղեկությունները և հատկապես հայատառ պարսկերեն Ավետարանի ձեռագրերի գոյությունը (Հ^մ 8492, Հ^մ 3044) թույլ են տալիս ենթադրելու, որ ԺԸ. դարում Շամախիում (նաև գրեթե Շիրվանի հայաբնակ բոլոր գյուղերում՝ Հնդար, Մադրասա, Սաղիան, Չարխու, Փախրաքիչի, Տուարշեն, Ղաջար, Թալիշ, Գիւրջիլար,

Մաշտոցի անունն Մատենադարանի, ձեռագիրք 3001 - 3400, հ. Ժ, խմբագրությամբ՝ Գ. Տեր-Վարդանեանի, Երևան, 2019, սյ. 213 - 218:

²³⁵ Ձեռագրերի հիշատակարանների հայերեն թարգմանությունը և վերլուծությունը տե՛ս **Կիրակոսյան Դ.** «Մաշտոցյան Մատենադարանի հայատառ պարսկերեն երկու ձեռագիր Ավետարանների հիշատակարանների մասին (ՄՄ 3044, ՄՄ 8492)», *Էջմիածին, Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ՀԵ (Ե), էջ 47-61:*

²³⁶ Տե՛ս **Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 255-256:

²³⁷ Տե՛ս **Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 310-311:

²³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 328:

²³⁹ Կովկասյան պարսիկների և պարսկերենի մասին տե՛ս **Տոնյան Ա., Կովկասյան պարսկերեն. պատմահամեմատական ուսումնասիրություն**, բանասիրական գիտությունների թեկնածուի ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզուի հիստորիոսոփ 2015:

²⁴⁰ Տե՛ս **Օրմանյան արք. Մաղաթիա, Ազգապատում**, Հայ Ուղղափառ եկեղեցույ անցքերը սկիզբեն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով, Բ. հատոր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, սյ. 3006:

Քիվվար, Խաչմաս և այլն²⁴¹), Գանձակում հայերեն տեղական բարբառին զուգահեռ կամ գուցե ավելի լավ տիրապետել են նաև պարսկերենի գրական տարբերակին: Ընդ որում, հայ բնակչությունը, լիովին հասկանալով նոր պարսկերենը և ունենալով սեփական հայերեն բարբառը, խոսել է նաև պարսկերենի տեղական տարբերակով, որը եղել է հարևան պարսկախոսների հետ շփման միջոց: Ըստ Մադրասայի (Շամախիի շրջանի այն եզակի գյուղերից, որը մինչև ԺԹ դարի վերջը պահպանել է իր պարսկական բարբառը և արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը) բնակիչների տեղեկությունների՝ նրանց նախնիները տասնյակ տարիներ առաջ դժվարացել են հայերեն արտահայտվել, եղել են մարդիկ, որոնք հայերեն բոլորովին չեն կարողացել խոսել: Ծերերը պատմել են, որ իրենց պապերն առհասարակ հայերեն չէին խոսում, բայց հաճախում էին հայկական եկեղեցի և «պաշտում էին Գրիգոր Լուսավորչի կրոնը»²⁴²: Յետագայում հայկական դպրոցների գործարկմամբ հաջողվել է հայերենը պահպանել՝ շփման լեզու օգտագործվող պարսկերենին ու թյուրքերենին զուգահեռ: Մակար Բարխուտարեանցը գրում է, որ «Դարբանդի, Ղուբայի, Բագուի, Շամախու, Շաքուայ եւ սոցա բոլոր գավառների (բացի Կապադակից) հայերեն ընդհանուր տիրող բարբառն է Արցախի այժմեան գործածական լեզուն, քանզի ինչպես գիտենք կանխաւ բնակչաց ամենամեծ մասն գաղթած եւ տեղափոխւած են Արցախից: Սպահանից, Խոյից և Թեհրանից եկողներ նույնպես կան»²⁴³: Ղաբայան, ինչպես ներկայացնում է Եսայի Յասան Չալայան կաթողիկոսը, խիստ բնակեցված էր ինչպես Ղարաբաղից այստեղ տեղափոխված հայերով, այնպես էլ տեղաբնիկ այլ ժողովուրդներով²⁴⁴: 1720-ական վերջերին և 1730-ականների սկզբներին Ղարաբաղից ու Սյունիքից հայ գաղթականության հոսք է սկսվում դեպի ռուսական զորքերի կողմից գրավված մերձկասպյան տարածքները: 1724 թվականին Պետրոս Առաջին թագավորը հրաման է արձակում հայերին տեղափոխել ու բնակեցնել Գիլան, Մազանդարան, Բաբու, Դերբենդ, և այլ համապատասխան գավառներում և ստեղծել նրանց համար բարեկեցիկ կյանքի պայմաններ²⁴⁵: Եվ չենք բացառում, որ հենց այս գաղթի ընթացքում տեղափոխված հայալեզու բնակչության միջոցով ևս հայերենը պահպանվեց:

Մտրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանցը աղուանից մնացորդ է համարում Շամախի գավառի Մադրասա գյուղի 500²⁴⁶ տանից ավելի հայերին և Ղուբայի գավառի Խաչմաս և Քիվվար գյուղերի 150 տանից ավելի հայերին, որոնք ամենքը խոսում են «Ֆարս-հրեարեն» բարբառով²⁴⁷: Մակար Բարխուտարեանցը նշում է, որ Մադրասան

²⁴¹ ԺԸ. դարում Դերբենտի, Ղուբայի, Մուշկուրի, Գյոզչայի հայաբնակ գյուղերի մի ցանկ տե՛ս **Ղալայան, Տ.**, «Նոր առաներենի ուսումնասիրության պատմությունից», *Էջմիածին*, Ե, 2016, էջ 91-92: Իսկ Շիրվանի հայաբնակ գյուղերը տե՛ս **Կարապետյան Ս.**, *Բուն Աղվանքի հայկական վիճազրերը*, Երևան, 1997: Արսեն Յակոբյանը ներկայացրել է պարսկախոս հայերի տեղաբախվածությունը Դերբենդի, Ղուբայի և Մուշկուրի շրջաններն ընդգրկող տարածքում, տե՛ս, **Յակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 125-143:

²⁴² Տե՛ս **Ղալախյան Ա.**, «Յամառուտակի Մադրասայի հայ-թաթերենի մասին», *Հայկական ՍՍՐ Գիտությունների Ակադեմիայի Տեղեկագիր*, հ^տ 4, 1957, էջ 86:

²⁴³ Տե՛ս **Մակար Եսա. Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 150:

²⁴⁴ Տե՛ս **Խառատյան Յ.**, նշվ. աշխ., էջ 113:

²⁴⁵ Տե՛ս **Бутков П. Г.**, Указ. соч., С. 62, 68.

²⁴⁶ Տե՛ս **Մտրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 197, 541, 544: Նույն աշխատության էջ 546-ում Սմբատեանցը նշում է «5-6000 տան չափ քրիստոնյա», ինչը, կարծում ենք, տպագրական սխալ է:

²⁴⁷ Արսեն Յակոբյանը նշում է, որ XVIII-XX դարերի աղբյուրագիտական և գիտական հրապարակումներում Արևելյան Այսրկովկասի հայերը հիշատակվում են «թաթախոս հայեր», «հայ-թաթեր», «քրիստոնյա կամ գրիգորյան թաթեր» անուններով, տե՛ս **Акопян А.**, «Татоязычные армяне: 15 веков от «Армянство» к «Армянству», Южный Кавказ: Территории. Истории. Люди., Науч. ред.: Екатерина Герасимова, От. ред.: Нино Лежава, Тбилиси: «Диодене», 2006, С. 190.

ունի 483 ծովս, բնակիչները գաղթել են Սպահանից, խոսում են պարսկերեն, որը մերձավորություն ունի *լինաց* կամ *լահնաց* բարբառին: Սակայն բոլորը գիտեն հայերեն²⁴⁸: Ընդ որում, մադրասացիները իրենց լեզուն անվանել են «փարսի»²⁴⁹: Ըստ տեղեկությունների, Շիրվանում թաթերի ու հայերի փոքր մասը խոսում է թաթարերենից ու հայերենից տարբերվող յուրահատուկ լեզվով, որը, ըստ տեղացիների, «աղավաղված պարսկերեն է»²⁵⁰: ԺԸ. դարի առաջին կեսին վերաբերող ռուսական աղբյուրի վկայություններում նշվում է երեք լեզուների՝ թյուրքերենի, թաթարերենի (իմա՝ թաթերեն) և պարսկերենի գոյությունը²⁵¹: Իսկ ԺԹ. դարի վերջին և Ի. դարի սկզբին նշվում է Զիվար, Խաչ-մաս, Մադրասա գյուղերում թաթերեն (Յ. Կ. պարսկերենի տարբերակ)-թյուրքերեն երկլեզվության մասին²⁵²:

ԺԸ. դարում պարսկերենի մասին հիշատակություններն հիմնականում ավարտվում են և ԺԹ. դարի վերջում և Ի. դարի սկզբում ռուսումնասիրողները խոսում են միայն թաթերենի, այսինքն՝ պարսկերենի բանավոր մի տարբերակի մասին: Կարծում ենք՝ թաթերենը կամ պարսկերենի տարբերակը, որն իր լեզվական առանձնահատկություններով պարսկական կամ հարավ-արևմտաիրանական լեզու է²⁵³, անցել է պարսկերեն → աղավաղված պարսկերեն/թաթերեն/պարսկերենի բանավոր տարբերակ փուլով: Ընդ որում, այն Շիրվանի պարսիկների խոսակցական և հարևանների, այդ թվում՝ հայերի հետ շփման լեզուն էր: Այս փուլը, երբ Շիրվանի հայ բնակչության համար նոր պարսկերենը լիովին հասկանալի լեզու էր, իսկ բանավոր խոսքում օգտագործում էին կովկասյան պարսկերենի մի տարբերակը կամ թաթերենը, կարծում ենք, շարունակվել է մինչև ԺԸ. դարի վերջ: Այս երևույթի համար կարևորագույն կոման են կրկին Մատենադարանյան հայատառ պարսկերեն ձեռագրերը, որոնք, գրված լինելով նոր պարսկերենով (որոշակի հայերենի ազդեցությունը պայմանավորված է գրիչների հայ լինելով), ցույց չեն տալիս բարբառային շեղում (բացառությամբ, թերևս, ապառնի ժամանակաձևի):

Պարսկերենի գերակայության փուլն անցած Շիրվանի հայկական բնակավայրերից ռուսումնասիրվել է Մադրասա, Զիվար, Խաչ-մաս գյուղերի բնակիչների պարսկերեն բարբառը²⁵⁴: ԺԹ. դարի վերջում Մակար Եպս. Բարխուտարեանցը²⁵⁵, Մեսրոպ Արթեպիսկոպոս Սմբատեանցը²⁵⁶, Լ. Լոպատինսկին²⁵⁷ իսկ ավելի ուշ Մերգեյ Ղալթախյանը²⁵⁸, Բորիս Միլլերը²⁵⁹, Արսեն Յակոբյանը²⁶⁰, Ս. Էֆենդյանը²⁶¹, Տորբ

²⁴⁸ Տե՛ս Մակար Եպս. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 91:

²⁴⁹ Տե՛ս Акоюн А., Укз. соч., С. 201.

²⁵⁰ Տե՛ս Յակոբյան Ա., «Թաթախոս հայերի լեզվական մշակույթի շուրջ (18-րդ դ.-20-րդ դ. սկիզբ)», *Էջմիածին*, հմր 9, 2002, էջ 71:

²⁵¹ Տե՛ս Ղալալյան Տ., նշվ. աշխ., էջ 80-81

²⁵² Տե՛ս Յակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 78:

²⁵³ Տե՛ս Грюнберг А. Л. «О месте татского среди иранских языков», *Вопросы языкознания*, №1, 1961, С. 106-107.

²⁵⁴ Յայերենի տեղական բարբառի և պարսկերենի լեզվական տարբերակի փոխազդեցությունները, հնչյունական, ձևաբանական, բառապաշարի և նույնիսկ լեզվական կաղապարների համակարգերի փոխառնչակցությունները հանգեցնում են բազմաթիվ տիպաբանական նմանությունների, այս մասին տե՛ս Ղալթախյան Ա., «Յայերենի տարրերը հայ-թաթերեն բարբառում», Լրաբեր Չասարական Գիտությունների հ^մ 3, 1970, էջ 72-77:

²⁵⁵ Տե՛ս Մակար Եպս. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 56-58:

²⁵⁶ Տե՛ս Մեսրոպ Արթեպիսկոպոս Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 283-292:

²⁵⁷ Տե՛ս Лопатинский Л., *Армяно-татские тексты, Сборник материалов для описания местностей и племен Кавказа*, Тифлис, 1894, вып. 20, С. 25-32

²⁵⁸ Տե՛ս Ղալթախյան Ա., «Չամառտակի Մադրասայի հայ-թաթերենի մասին», ՏԳԳ, 1957, թ. 4, էջ 85-96, նույնի՝ Մադրասցիների թաթերեն լեզուն (ատենախոսություն), Երևան, 1972:

Դալայյանը²⁶² ուսումնասիրել են Արևելյան Այսրկովկասի պարսկախոս հայերի լեզվական մշակույթի, լեզվի և լեզվի պատմության հարցերը:

Եզրակացություն

Այսպիսով՝ պարսկերենի լեզվական գերակայության պայմաններում Շիրվանի հայ բնակչությունն անցնում է երկլեզվության, երբեմն նաև՝ եռալեզվության փուլերով: Եթե պարսկերենի բանավոր խոսակցական տարբերակը կամ կովկասյան պարսկերենի բարբառը հայ բնակչության համար հարևանների հետ շփման միջոց էր, ապա գրական նոր պարսկերենը լիովին հասկանալի էր նրանց համար՝ ընդհուպ մինչև ԺԸ դարավերջ: Պատկերը փոխվում է ԺԹ դարի կեսերից, երբ գրական պարսկերենի օգտագործումը կորցնում է իր նշանակությունը տարածաշրջանում այլ պետությունների ուժային գերակայությունների փոփոխության արդյունքում, մինչդեռ բանավոր պարսկերենի տարբերակը մնում է գործածության մեջ:

Շիրվանի ողջ բազմալեզու, բազմամշակութային ու բազմէթնիկ խճապատկերում պարսկերենը միջէթնիկական հաղորդակցության լեզու էր, և ողջ տարածաշրջանում պարսկալեզվությունը համընդհանուր տարածում էր գտել: Սրան զուգահեռ՝ տարածաշրջանում պահպանվեցին հայերենը և հարավարևելակովկասյան լեզուները՝ այսպիսով ստեղծելով լեզվական ներթափանցումների բացառիկ կոնտակտային մի գոտի:

THE PERSOPHONIE AMONG ARMENIANS OF SHIRVAN (18TH CENTURY)²⁶³

HASMIK KIRAKOSYAN

Matenadaran, Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts,

Senior Researcher;

Yerevan State University, Faculty of Oriental Studies,

Ph.D. in Philology, Associate Professor

Yerevan, Republic of Armenia

The article deals with the problems related to the spread of the Persian language and its practical role among the Armenian population in Shirvan in the 18th century. The aim of the study is to reveal the process of adoption of Persian by the Armenians with the resulting bilingualism under the conditions of Islam imposition and deportations in the region. The article highlights issues regarding the knowledge of Persian among Shirvan Armenians as well as the problems connected with the language variations over time and its practical significance. The method of sociolinguistics is used in the article. The main conclusions of the article are the following: within the frames of cultural Persianization the Shirvan Armenians were fluent in oral Persian both in

²⁵⁹ Տե՛ս Миллер, Б., *Таты, их расселения и говоры*, Известия общества обследования и изучения Азербайджана, N 8, вып. VII, Баку, 1929, С. 28-29:

²⁶⁰ Տե՛ս **Յակոբեան Ա.**, նշվ. աշխ. էջ 125-142, **Հակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 70-82, **Աкопян А.**, Укз. соч., С. 190-213:

²⁶¹ Տե՛ս **Էֆենդյան Ս.**, «Մադրասացիների երկլեզվության հարցի շուրջ», *Լրաբեր Հասարակական Գիտությունների*, 2004 (1), էջ 88-96:

²⁶² Տե՛ս **Դալայյան Տ.**, նշվ. աշխ., էջ 88-89, 91-95:

²⁶³ *The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project №18T-6F376.*

colloquial and literary versions, in addition to Armenian, the knowledge of oral colloquial was due to the need for communication with the neighboring Persian speakers, the practical use of literary Persian was preserved among Armenians until the turn of the 18th century the proofs of which are the Persian Gospel manuscripts N 8492 and N 3044 written in Armenian letters, kept in the Armenian manuscript fund at the Matenadaran, Yerevan.

Key words: *Shirvan, Armenian population, Persephone, language of interethnic communication, bilingualism, Islam, written by Armenian letters, manuscript, Gospel.*

ПЕРСОФОНИЯ У АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ ШИРВАНА (XVIII В.)²⁶⁴

АСМИК КИРАКОСЯН

*главный сотрудник Матенадарана,
Института древних рукописей имени Месропа Маиштоца,
кандидат филологических наук, доцент
факультета востоковедения
Ереванского государственного университета
г. Ереван, Республика Армения*

В статье рассматриваются проблемы распространения персидского языка и его практическое значение для армянского населения Ширвана в XVIII веке. Цель статьи – выявить результаты овладения персидским и процесса персофонии среди армян Ширвана в условиях депортации и распространения ислама в регионе. Затрагиваются вопросы, касающиеся знания персидского языка среди армян Ширвана, периодов появления его вариантов и практического значения.

В процессе работы были применены методы социолингвистических исследований.

Основные выводы статьи заключаются в следующем: в рамках культурной персианизации армяне Ширвана, помимо армянского, осваивали устную и литературную версии персидского языка. Потребность в устном или разговорном персидском языке была вызвана необходимостью межэтнического общения с персофонными соседями. Практическое значение литературного персидского сохранялось среди армян до конца 18-го века, о чем свидетельствуют рукописи Евангелия (N 8492, N 3044) на персидском языке, но написанные армянскими буквами, хранящиеся в Армянском фонде Матенадарана.

Ключевые слова: *Ширван, армянское население, персофония, двуязычие, язык межэтнического общения, ислам, армянские надписи, рукопись, Евангелие.*

²⁶⁴ Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА в рамках научного проекта №18T-6F376.